ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3- 4-8033

«28» սեպտեմբերի 2021թ.

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Զանյանին,
«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Սարգսյանին

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային և կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն հայտարարվել են ընտրված մասնակիցներ:

Հիշյալ ընթացակարգի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2021թ. սեպտեմբերի 27-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/15» ծածկագրով պայմանագրի նախագիծը տրամադրվել է համակարգի միջոցով: Առաջարկվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/15» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել այն՝ միաժամանակ ներկայացնելով նաև որակավորման և պայմանագրի ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների (Ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2 և Հավելված 4.1) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին:

Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/15» ծածկագրով
գնումը համակարգող՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-788, 511-792